ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 723-Լ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 932-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ _____ 2022 թվականի N _____ Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 723-Լ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 932-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մայիսի 19-ի «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառումը հաստատելու մասին» N 723-Լ որոշման (այսուհետ՝ որոշում)՝

- 2-րդ կետի 5-րդ ենթակետում «2022 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2023 թվականի հուլիսի 1-ը» բառերով.
- հավելվածի՝

ա. 4-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) **ՊՈՍ-տերմինալ՝** վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր՝ ըստ «Անկանխիկ վճարումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված նշանակության, որոնց միջոցով հնարավոր է Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով գործող մանրածախ առևտուր իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտներին կատարելու անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ.»,

բ. 7-րդ կետում «կոմունալ ծառայությունների դիմաց կատարված

վճարումներից» բառերից հետո լրացնել «(բացառությամբ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով շահումով խաղերի, մեքենայացված խաղերի և կենդանի մասնակցության համար կատարված անկանխիկ վճարները)»,

գ. 11-րդ և 12-րդ կետերում «կոմունալ ծառայությունների» բառերից հետո լրացնել «(գազի, էլեկտրաէներգիայի, խմելու ջրի, ֆիքսված հեռախոսի մատակարարման ծառայություններ)» բառերը,

դ. 17-րդ կետից հանել «և առնվազն 3 ամիս անընդմեջ կստանա նախատեսված հետվճարը» բառերը և նույն կետում «մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը» բառերով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության **2022 թվականի մայիսի 19-ի** «Կ**ենսաթոշակառուներին անկանխիկ եղանակով վճարումներից հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցության միջոցառման իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության N723-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**» N 932-L որոշման հավելվածի՝

ա) 2-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) **ՊՈՍ-տերմինալ՝** վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր՝ ըստ «Անկանխիկ վճարումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված նշանակության, որոնց միջոցով հնարավոր է Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով գործող մանրածախ առևտուր իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտներին կատարելու անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարումներ.»,

բ) 2-րդ կետի 9-րդ ենթակետում «կոմունալ ծառայությունների» բառերից հետո լրացնել «(գազի, էլեկտրաէներգիայի, խմելու ջրի, ֆիքսված հեռախոսի մատակարարման ծառայություններ)» բառերը և «կատարված վճարումներից» բառերից հետո լրացնել «(բացառությամբ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին, Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով շահումով խաղերի, մեքենայացված խաղերի և կենդանի մասնակցության համար կատարված անկանխիկ վճարները)».

գ) 4-րդ կետում «դեկտեմբեր» բառը փոխարինել «2023 թվականի հուլիս» բառերով,

դ) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«5. 2023 թվականի հունիս ամսվա հետվճարը հաշվարկվում և վճարվում է 2023 թվականի հուլիսին։»,

ե) 14-րդ կետում «2023 թվականի փետրվարի 5-ից 15-ը» բառերը փոխարինել «2023 թվականի օգոստոսի 5-ից 15-ը» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարկմանը հաջորդող օրվանից, իսկ որոշման 1-ին կետով հաստատված միջոցառումը գործարկվում է 2023 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:
4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2023 թվականի հունվարի 23-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ՝ «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու պետություն-մասնավոր սոցիալական փոխգործակցություն» միջոցառումից բխող հետվճարների ֆինանսավորելու և եկամտային հարկը վճարելու համար Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից միջոցներ հատկացնելու վերաբերյալ: